# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

**N 11/45 -2018**

ք. Երևան <<20>> 03 2018 թ.

ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայությունը, ի դեմս ծառայության տնօրենի տեղակալ Ա. Գ. Հակոբյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության գլխավոր տնօրեն Վ. Գզրարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է <<Ավտոմեքենաների պահպանման>> ծառայությունների մատուցման ապահովման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության _2_ օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված _5_ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **2 000 000** ( **երկու միլիոն**) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[2]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:[3]

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի

---

[2] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

[3] *Եթե պայմանագիրը կնքվում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերության հիմքով, ապա սույն կետից հանվում է 2-րդ նախադասությունը:*

...պետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ...ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է __4__ էջից, կնքվում է չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

**ՀՀ ԱԱԾ**
**ք.Երևան, Նալբանդյան104**
**ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի գործառնական վարչություն**
**Հ/հ 900011301067**
**ՀՎՀՀ 01507079**

**Տնօրենի տեղակալ**

**Ա. Հակոբյան**

(ստորագրություն)

Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

**« ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ » ՍՊԸ**
**Ք. Երևան, Ծովակալ Իսակովի 22**
**«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ**

**Հ/հ 1570003667300100**
**ՀՎՀՀ 01557589**

**Գլխավոր տնօրեն**

**Վ. Գզրարյան**

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 1
«20» 03 2018 թ. կնքված
11145-2018 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը** |
| 1 | Ավտոմեքենաների պահպանման ծառայություններ 50111170/2/13/1 | | հատ | **2 000 000** | 1 | **ք.Երևան, Նալբանդյան104** | **15.12.2018** |

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

ՀՀ դրամ

Ձեռքբերվող Ծառայության նկարագիր

Toyota Corola, Prado,Camry մեքենաների վերանորոգում և ավտոպահեստամասերի տեղադրում, այդ թվում՝

50111170/2/13/1

Համաձայն 14.09.2017թ-ի կնքված N 11/234-2017, 11.04.2013թ-ի կնքված ՆԱՊՁԲ- 11/03-2013պայմանագրի

| հ/հ | SU-1 (տեխնիկական զննման/դիագնոստիակա) SU-2 (վերանորոգման) ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները | Տրանսպորտային միջոցների մակնիշները (տեսակները) | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Տոյոտա Քեմրի 2.5 | Տոյոտա պրադո 4.0 | Տոյոտա Քեմրի 2.4 | Տոյոտա Կորոլլա |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | **SU-1 ներառվող ծառայությունների անվանումները** | Տոյոտա Քեմրի 2.5 | Տոյոտա պրադո 4.0 | Տոյոտա Քեմրի 2.4 | Տոյոտա Կորոլլա |
| 1 | Բռնկման համակարգի ստուգում | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| 2 | Կցորդման համակարգի ստուգում | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| 3 | Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| 4 | Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| 5 | Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| | **SU-2 ներառվող ծառայությունների անվանումները** | Տոյոտա Քեմրի 2.5 | Տոյոտա Պրադո 4.0 | Տոյոտա Քեմրի 2.4 | Տոյոտա Կորոլլա |
| | **1.Շարժիչ** | | | | |
| 6 | Շարժիչի հանում և տեղադրում | 120000 | 180000 | 120000 | 120000 |
| 7 | Շարժիչի քանդում արատավորում և հավաքում | 320000 | 480000 | 320000 | 320000 |
| 8 | Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները | 320000 | 480000 | 320000 | 320000 |
| 9 | Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով | 120000 | 250000 | 120000 | 120000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով | 0 | 0 | 0 | 0 |
| 11 | Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով և խտաբուկերով 1 կ-տ | 0 | 0 | 0 | 0 |
| 12 | Վառոցքի մոմի բնիկի նորոգում | 0 | 0 | 0 | 0 |
| 13 | Շարժիչի փականների զսպանակների փոխարինում | 70000 | 140000 | 70000 | 70000 |
| 14 | Փականների խցուկների փոխարինում 1 կ-տ | 180000 | 300000 | 180000 | 180000 |
| 15 | Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում 1 կ-տ | 150000 | 350000 | 150000 | 150000 |
| 16 | Շարժիչի մխոցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում | 320000 | 480000 | 320000 | 320000 |
| 17 | Ծնկաձև լիսեռի հղկում | 0 | 0 | 0 | 0 |
| 18 | Ծնկաձև լիսեռի  հանում տեղադրում կամ փոխարինում | 320000 | 480000 | 320000 | 320000 |
| 19 | Ծնկաձև լիսեռի ներդրակների փոխարինում 1 կ-տ | 320000 | 480000 | 320000 | 320000 |
| 20 | Ծնկաձև լիսեռի ատամնանիվի փոխարինում | 150000 | 350000 | 150000 | 150000 |
| 21 | Ծնկաձև լիսեռի ուղղում | 0 | 0 | 0 | 0 |
| 22 | Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում | 25000 | 25000 | 25000 | 25000 |
| 23 | Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում | 120000 | 120000 | 120000 | 90000 |
| 24 | Շարժիչի բլոկի փոխարինում | 320000 | 480000 | 320000 | 320000 |
| 25 | Շարժիչի գլանի փոխարինում (гилзовка) | 0 | 0 | 0 | 0 |
| 26 | Մխոցի փոխարինում 1 հատ | 320000 | 480000 | 320000 | 320000 |
| 27 | Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում | 150000 | 350000 | 150000 | 150000 |
| 28 | Բաշխիչ լիսեռի ականոցների հանում և տեղադրում կամ փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 29 | Բաշխիչ լիսեռի խտաբուկի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 30 | Փոկանիվի փոխարինում | 20000 | 20000 | 20000 | 20000 |
| 31 | Շարժիչի ատամնավոր փոկի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 32 | Շարժիչի շղթայի փոխարինում | 150000 | 350000 | 150000 | 150000 |
| 33 | Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում) | 0 | 0 | 0 | 0 |
| 34 | Շարժիչի քարտերի փոխարինում, միջադիրի փոխարինումով | 15000 | 15000 | 15000 | 15000 |
| 35 | Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում | 15000 | 15000 | 15000 | 15000 |
| 36 | Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով | 20000 | 20000 | 20000 | 20000 |
| 37 | Շարժիչի յուղի մղիչի փոխարինում | 150000 | 350000 | 150000 | 150000 |
| 38 | Շարժիչի յուղի մղիչի նորոգում, մաքրում | 0 | 0 | 0 | 0 |
| 39 | Շարժիչի յուղի մղիչի մաքրում | 20000 | 20000 | 20000 | 20000 |
| 40 | Յուղի ծորակի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 41 | Օդաքաշակ փողրակի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 42 | Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 43 | Շարժիչի կափարիչի միջադիրի փոխարինում | 15000 | 80000 | 15000 | 15000 |
| 44 | Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում | 120000 | 120000 | 120000 | 90000 |
| 45 | Շարժիչի կափույրի փոխարինում | - | - | - | - |
| 46 | Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում | - | - | - | - |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Շարժիչի շարժաթևի փոխարինում 1 հատ | 320000 | 480000 | 320000 | 320000 |
| 48 | Մխոցային օղակների փոխարինում 1 կ-տ | 320000 | 480000 | 320000 | 320000 |
| 49 | Շարժիչի բաշխիչ լիսեռի երիթակի փոխարինում | 320000 | 480000 | 320000 | 320000 |
| 50 | Ատամնանիվի փոխարինում | - | - | - | - |
| 51 | Ատամնանիվի փոկի փոխարինում | - | - | - | - |
| 52 | Ատամնավոր փոկի պատյանի փոխարինում | - | - | - | - |
| 53 | Սուխարիկ փոխարինում 1կ/տ | 150000 | 350000 | 150000 | 150000 |
| 54 | Շարժիչի հանդարտիչի փոխարինում | 150000 | 350000 | 150000 | 150000 |
| 55 | Շարժիչի փոկի հոլովակի փոխարինում | 20000 | 20000 | 20000 | 20000 |
| 56 | Շարժիչի հոլովակի առանցքակալի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 57 | Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով | 150000 | 350000 | 150000 | 150000 |
| 58 | Շարժիչի յուղի արանքաչափիչի (Քցտ) իրանի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 59 | Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում | 20000 | 70000 | 20000 | 20000 |
| 60 | Շարժիչի փոկի ձգիչի նորոգում | 0 | 0 | 0 | 0 |
| 61 | Շարժիչի գամասեղի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 62 | Շարժիչի գամասեղի փոխարինում բնիկի նորոգումով | 0 | 0 | 0 | 0 |
| 63 | Գլխիկի հեղույսի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 64 | Ծնկաձև լիսեռի հեղույսի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 65 | Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում | 400000 | 400000 | 400000 | 400000 |
| 66 | Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում | - | - | - | - |
| 2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ | | | | | |
| 67 | Յուղի և յուղի զտիչի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 68 | Ավտոմեքենայի յուղում | 0 | 4000 | 0 | 0 |
| 69 | Համակարգչային ախտորոշում, թերությունների վերացմամբ | 5000 | 5000 | 5000 | 5000 |
| 70 | Յուղի ռադիատորի փոխարինում | 30000 | 30000 | 30000 | 30000 |
| 71 | Յուղի ռադիատորի նորոգում | 0 | 0 | 0 | 0 |
| 72 | Շարժիչի կոլեկտորի փոխարինում | 80000 | 80000 | 80000 | 80000 |
| 73 | Շարժիչի կոլեկտորի միջադիրի փոխարինում | 80000 | 80000 | 80000 | 80000 |
| 74 | Վառոցքի մոմի փոխարինում 1 կ-տ | 5000 | 8000 | 5000 | 5000 |
| 75 | Վառելիքի նուրբ մաքրման զտիչի փոխարինում | 12000 | 7000 | 12000 | 12000 |
| 76 | Օդի զտիչի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 77 | Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում | 6000 | 6000 | 6000 | 6000 |
| 78 | Օդի զտիչի փողրակի հանում և տեղադրում | 6000 | 6000 | 6000 | 6000 |
| 79 | Կարբյուրատորի փոխարինում կամ հանում տեղադրում | - | - | - | - |
| 80 | Կարբյուրատորի վերանորոգում | - | - | - | - |
| 81 | Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում | 30000 | 56000 | 30000 | 30000 |
| 82 | Ինժեկտորի բոցամուղերի մաքրում | 30000 | 56000 | 30000 | 30000 |
| 83 | Բոցամուղի կոդավորում | 0 | 0 | 0 | 0 |
| 84 | Ինժեկտորի բոցամուղի խտաբուկերի փոխարինում | 30000 | 56000 | 30000 | 30000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Բենզամղիչի փոխարինում | 12000 | 20000 | 12000 | 12000 |
| 86 | Վառելիքի կոշտ մաքրման զտիչի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 87 | Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 88 | Բռնկման կարգավորում | - | - | - | - |
| 89 | Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում | 25000 | 25000 | 25000 | 25000 |
| 90 | Ղեկավարման բլոկի վերանորոգում | 0 | 0 | 0 | 0 |
| 91 | Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում | 20000 | 20000 | 20000 | 20000 |
| 92 | Վառելիքի բաքի մաքրում | 30000 | 30000 | 30000 | 30000 |
| 93 | Օդի ծախսի տվիչի փոխարինում | 35000 | 35000 | 35000 | 35000 |
| 94 | Տրամբլյորի հանում և տեղադրում կամ փոխարինում | - | - | - | - |
| 95 | Տրամբլյորի վերանորոգում | - | - | - | - |
| 96 | Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում | 30000 | 30000 | 30000 | 30000 |
| 97 | Ջրի խողովակի, փողրակի փոխարինում | 50000 | 50000 | 50000 | 50000 |
| 98 | Բենզոբաքի բենզոմղիչի ցանցի փոխարինում | 20000 | 20000 | 20000 | 20000 |
| 99 | Բենզոբաքի բենզոմղիչի ցանցի մաքրում | 20000 | 20000 | 20000 | 20000 |
| 100 | Յուղի ճնշման տվիչի փոխարինում | 50000 | 50000 | 50000 | 50000 |
| 101 | Տվիչի փոխարինում | 50000 | 50000 | 50000 | 50000 |
| 3. Սառեցման և արտածման համակարգ | | | | | |
| 102 | Հովհարի փոխարինում | 50.000 | 50.000 | 50.000 | 50.000 |
| 103 | Հովհարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում | 50.000 | 50.000 | 50.000 | 50.000 |
| 104 | Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում | 30.000 | 30.000 | 30.000 | 30.000 |
| 105 | Ռադիատորի նորոգում | 0 | 0 | 0 | 0 |
| 106 | Շերտափեղկի փոխարինում | 120000 | 120000 | 120000 | 120000 |
| 107 | Շերտափեղկի կառավարման ձգաձողի փոխարինում | 60000 | 60000 | 60000 | 60000 |
| 108 | Ընդարձակող բաքի փոխարինում | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| 109 | Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 110 | Ջրի ծորակի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 111 | Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 112 | Հովհարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում | 40000 | 40000 | 40000 | 40000 |
| 113 | Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված | 130000 | 130000 | 130000 | 130000 |
| 114 | Վառարանի ռադիատորի նորոգում | 0 | 0 | 0 | 0 |
| 115 | Վառարանի շարժիչի փոխարինում | 40000 | 40000 | 40000 | 40000 |
| 116 | Թերմոստատի փոխարինում | 20000 | 20000 | 20000 | 20000 |
| 117 | Ջրի մղիչի փոխարինում միջադիրով | 25000 | 25000 | 25000 | 25000 |
| 118 | Ջրի մղիչի միջադիրի փոխարինում | 25000 | 25000 | 25000 | 25000 |
| 119 | Գեներատորի փոկի փոխարինում | 12000 | 12000 | 12000 | 12000 |
| 120 | Գեներատորի փոկի ձգող հոլովակի փոխարինում | 17000 | 17000 | 17000 | 17000 |
| 121 | Ջրի ռադիատորի | 0 | 0 | 0 | 0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | վերանորոգում | | | | |
| 122 | Թերմոստատի միջադիրի փոխարինում | 20000 | 20000 | 20000 | 20000 |
| 123 | Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում | 60000 | 60000 | 60000 | 60000 |
| 124 | Խլարարի 1 հատ խողովակի փոխարինում | 60000 | 60000 | 60000 | 60000 |
| 125 | Խլարարի անուրի (хамут) փոխարինում | 10000 | 10000 | 10000 | 10000 |
| 126 | Խլարարի ներդիրի փոխարինում | 60000 | 60000 | 60000 | 60000 |
| 127 | Խլարարի կախոցի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 128 | Յովացման հեղուկի փոխարինում | 12000 | 12000 | 12000 | 12000 |
| 4. Կցորդում և ՓՏ | | | | | |
| 129 | Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում | 60000 | 60000 | 60000 | 60000 |
| 130 | Աշխատանքային կամ գլխ. գլանի նորոգում | 0 | 0 | 0 | 0 |
| 131 | Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 132 | Կցորդման ոտնակի հանում և տեղադրում կամ փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 133 | Կցորդման ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 134 | Կցորդման փողրակի հանում և տեղադրում կամ փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 135 | Կցորդման երկժանիի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 136 | ՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները | 360000 | 360000 | 360000 | 360000 |
| 137 | ՓՏ-ի հավաքածույի փոխարինում | 360000 | 360000 | 360000 | 360000 |
| 138 | ՓՏ-ի առջևի խտաբուկի փոխարինում | 120000 | 120000 | 120000 | 90000 |
| 139 | ՓՏ-ի հետևի խտաբուկի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 140 | ՓՏ-ի հանում և տեղադրում | 110000 | 110000 | 110000 | 80000 |
| 141 | ՓՏ-ի քանդում,արատավորում, հավաքում | 360000 | 360000 | 360000 | 360000 |
| 142 | ՓՏ-ի պատյանի փոխարինում | 360000 | 360000 | 360000 | 360000 |
| 143 | ՓՏ-ի առանցքակալի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 144 | ՓՏ-ի միջանկյալ լիսեռի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 145 | ՓՏ-ի ատամնանիվի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 146 | ՓՏ-ի առաջնային լիսեռի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 147 | ՓՏ-ի երկրորդային լիսեռի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 148 | ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 149 | ՓՏ-ի բարձիկի փոխարինում | 18000 | 18000 | 18000 | 18000 |
| 150 | ՓՏ-ի փոխանցման լծակի փոխարինում | 18000 | 18000 | 18000 | 18000 |
| 151 | ՓՏ-ի յուղի փոխարինում | 18000 | 18000 | 18000 | 18000 |
| 152 | Վազքաչափի շարժաբերի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ | | | | | |
| 153 | Բաշխիչ տուփի հիմնական նորոգում, | 0 | 180000 | 0 | 0 |
| 154 | Բաշխիչ տուփի հանում և տեղադրում կամ փոխարինում | 0 | 90000 | 0 | 0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 155 | Բաշխիչ տուփի քանդում և արատավորում,հավաքում | 0 | 180000 | 0 | 0 |
| 156 | Բաշխիչ տուփի բարձր փոխանցման մեխանիզմի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 157 | Բաշխիչ տուփի ցածր փոխանցման մեխանիզմի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 158 | Բաշխիչ տուփի դիաֆրագմաների փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 159 | Բաշխիչ տուփի դիֆերենցիալի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 160 | Բաշխիչ տուփի միջակա լիսեռի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 161 | Բաշխիչ տուփի առաջնային լիսեռի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 162 | Բաշխիչ տուփի երկժանիի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 163 | Բաշխիչ տուփի բարձիկի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 164 | Բաշխիչ տուփի խտաբուկի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 165 | Բաշխիչ տուփի առանցքակալի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 166 | Կարդանային լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 167 | Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 168 | Բաշխիչ տուփի կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 169 | Տվիչի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 170 | Բաշխիչ լիսեռի ատամնանիվի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 171 | Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում կամ փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 6. Առջևի և հետևի կամրջակներ | | | | | |
| 172 | Առջևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում | 0 | 110000 | 0 | 0 |
| 173 | Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման (ռեդուկտոր) քանդում, արատավորում և հավաքում | 0 | 120000 | 0 | 0 |
| 174 | Առջևի կամրջակի կիսասռնու հանում և տեղադրում կամ փոխարինում | 0 | 30000 | 0 | 0 |
| 175 | Առջևի կամրջակի կիսասռնու առանցքակալի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 176 | Առջևի կամրջակի կիսասռնու առանցքակալի խտաբուկերի փոխարինում | 0 | 30000 | 0 | 0 |
| 177 | Կամրջակի յուղի փոխարինում | | 10000 | 0 | 0 |
| 178 | Առջևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում | 40000 | 40000 | 40000 | 40000 |
| 179 | Առջևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 180 | Հետևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում | 0 | 120000 | 0 | 0 |
| 181 | Հետևի կամրջակի լիկատար քանդում, արատավորում և հավաքում | 0 | 200000 | 0 | 0 |
| 182 | Հետևի կամրջակի կիսասռնու հանում և տեղադրում կամ փոխարինում | 0 | 80000 | 0 | 0 |
| 183 | Հետևի կամրջակի կիսասռնու առանցքակալի փոխարինում | 0 | 90000 | 0 | 0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 184 | Հետևի կամրջակի կիսասռնու առանցքակալի խտաբուկերի փոխարինում | 0 | 90000 | 0 | 0 |
| 185 | Հետևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 186 | Հետևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում | 0 | 80000 | 0 | 0 |
| 187 | Հետևի կամրջակի բլոկավորման համակարգի նորոգում | 0 | 0 | 0 | 0 |
| 188 | Կամրջակի տվիչի փոխարինում | 0 | 10000 | 0 | 0 |
| 7. Կախոց | | | | | |
| 189 | Տրավերսի հանում և տեղադրում կամ փոխարինում | 80000 | 0 | 80000 | 80000 |
| 190 | Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում կամ փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 191 | Առջևի անվակունդի առանցքակալի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 192 | Առջևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 193 | Հետևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 194 | Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 195 | Անվակունդի գամասեղի և հեղյուսի փոխարինում(մեկ անիվի համար) | 0 | 0 | 0 | 0 |
| 196 | Ձախ կամ աջ հոդակապի խտաբուկերի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 197 | Ցնցամեղմիչի թասակի փոխարինում | 16000 | 0 | 16000 | 16000 |
| 198 | Առջևի զսպանակի փոխարինում | 16000 | 16000 | 16000 | 16000 |
| 199 | Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում | 16000 | 16000 | 16000 | 16000 |
| 200 | Հարվածամեղմիչի վռանների փոխարինում | 16000 | 16000 | 16000 | 16000 |
| 201 | Ներքևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում | 18000 | 18000 | 18000 | 18000 |
| 202 | Ներքևի լծակի վռանների փոխարինում 1 հատ | 0 | 40000 | 0 | 0 |
| 203 | Ներքևի լծակի հեղույսի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 204 | Հարվածիչի (բարձիկի փոխարինում) | 0 | 0 | 0 | 0 |
| 205 | Վերևի լծակի հանում և տեղադրում  կամ փոխարինում | 0 | 18000 | 0 | 0 |
| 206 | Վերևի լծակի վռանների փոխարինում 1 հատ | 0 | 0 | 0 | 0 |
| 207 | Վերևի լծակի հեղույսի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 208 | Հետևի վերևի լծակի վռանի փոխարինում 1 հատ | 0 | 0 | 0 | 0 |
| 209 | Գնդե հոդակապերի պատյանի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 210 | Գնդե հոդակապերի փոխարինում | 60000 | 60000 | 60000 | 60000 |
| 211 | Կայունարարի հանում և տեղադրում կամ փոխարինում | 30000 | 30000 | 30000 | 30000 |
| 212 | Առջևի կայունարարի վռանների փոխարինում | 7000 | 14000 | 7000 | 7000 |
| 213 | Հետևի կախոցի անվաբացքի կարգավորում | 0 | 0 | 0 | 0 |
| 214 | Հետևի կայունարարի վռաների փոխարինում | 7000 | 7000 | 7000 | 0 |
| 215 | Կայունարարի կալունակի փոխարինում | 7000 | 7000 | 7000 | 7000 |
| 216 | Հետևի զսպանակների փոխարինում | 16000 | 16000 | 16000 | 16000 |
| 217 | Հետևի ձգաձողի հանում և տեղադրում կամ փոխարինում | 25000 | 25000 | 25000 | 25000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 218 | Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում | 25000 | 25000 | 25000 | 25000 |
| 219 | Զսպանի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 220 | Զսպանի վռանների փոխարինում 1 հատ | 0 | 0 | 0 | 0 |
| 221 | Հետևի ցնցամեղմիչի փոխարինում | 16000 | 16000 | 16000 | 14000 |
| 222 | Հետևի հարվածամեղմիչի վռանների փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 223 | Անկյունագծային լծակի վռանների փոխարինում 1հատ | 0 | 0 | 0 | 0 |
| | 8. Ղեկային մեխանիզմ | | | | |
| 224 | Ղեկասյունակի(ՄՏսՏվՍՈ) հիմնական նորոգում, | 80000 | 80000 | 80000 | 80000 |
| 225 | Ղեկասյունակի(ՄՏսՏվՍՈ) արորիկի փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 226 | Ղեկասյունակի (ՄՏսՏվՍՈ) առանցքային սռնու փոխարինում | 60000 | 60000 | 60000 | 60000 |
| 227 | Ղեկասյունակի(ՄՏսՏվՍՈ) խաչուկների փոխարինում | 0 | 0 | 0 | 0 |
| 228 | Ղեկասյունակի(ՄՏսՏվՍՈ) վերանորոգման հավաքածուի փոխարինում | 80000 | 80000 | 80000 | 80000 |
| 229 | Ղեկասյունակի(ՄՏսՏվՍՈ) քանդում, արատավորում, հավաքում | 80000 | 80000 | 80000 | 80000 |
| 230 | Ղեկային մեխանիզմի ազդանշանի փոխարինում | 120000 | 120000 | 120000 | 120000 |
| 231 | Ղեկասյունակի պատյանի փոխարինում | 120000 | 120000 | 120000 | 120000 |
| 232 | Ղեկային մեխանիզմի փականքի փոխարինում | 120000 | 120000 | 120000 | 120000 |
| 233 | Ղեկային մեխանիզմի ղեկասյունակի ամրացման անուրի փոխարինում | 120000 | 120000 | 120000 | 120000 |
| 234 | Ղեկային ձողի առանցքակալի փոխարինում | 120000 | 120000 | 120000 | 120000 |
| 235 | Ղեկային կալունի ծգանների փոխարինում | 120000 | 120000 | 120000 | 120000 |
| 236 | Ղեկային կալունի միջին ծգանի փոխարինում | 120000 | 120000 | 120000 | 120000 |
| 237 | ՂԿ-ի առանցքակալի կամ վռանների փոխարինում | 120000 | 120000 | 120000 | 120000 |
| 238 | ՂԿ-ի հոդակապերի հանում և տեղադրում կամ փոխարինում | 120000 | 120000 | 120000 | 120000 |
| 239 | Հիդրոուժեղարարի մղիչի փոխարինում | 120000 | 120000 | 120000 | 120000 |
| 240 | Հիդրոուժեղարարի մղիչի հիմնական նորոգում, ներառյալ աշխատանքները | 120000 | 120000 | 120000 | 120000 |
| 241 | Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում | 120000 | 120000 | 120000 | 120000 |
| 242 | Հիդրոուժեղարարի բարձր ճնշման խողովակի փոխարինում | 120000 | 120000 | 120000 | 120000 |
| 243 | Հիդրոուժեղարարի ցածր ճնշման խողովակի փոխարինում | 120000 | 120000 | 120000 | 120000 |
| 244 | Հիդրոուժեղարարի վերանորոգման հավաքածուի փոխարինում | 120000 | 120000 | 120000 | 120000 |
| 245 | Ղեկային ծգաձողի հանում և տեղադրում կամ փոխարինում | 120000 | 120000 | 120000 | 120000 |
| 246 | Ղեկային ձողի գնդե հոդակապի նորոգում | 120000 | 120000 | 120000 | 120000 |
| 247 | Ղեկային ծգաձողի ծգանների հանում և տեղադրում կամ փոխարինում | 120000 | 120000 | 120000 | 120000 |